ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/6522/02/25

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԻ ՀԻՄՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

01.08.2025թ. ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը՝ դատավոր Ս. Երիցյանի նախագահությամբ (այսուհետ նաև՝ Դատարան), քննարկելով ըստ հայցի «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Հայցվոր) ընդդեմ «Հայաստանի Հանրապետության տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատասխանող)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 22.05.2025 թվականի թիվ 01/01-634 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորների ներկայացուցչի կողմից ներկայացված հայցի հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը,

ՊԱՐԶԵՑ

Հայցվորի ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ Պատասխանողի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 22.05.2025 թվականի թիվ 01/01-634 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Հայցադիմումն էլեկտրոնային համակարգի միջոցով դատարան ներկայացվել է 23.06.2025 թվականին, կազմվել է թիվ ԵԴ2/6522/02/25 քաղաքացիական գործն, որը **մակագրվել է** Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ս. Երիցյանին **24.06.2025 թվականին**, իսկ հասանելի է դարձել **25.06.2025 թվականին**:

Դատարանի 27.06.2025 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Դատարանի 14.07.2025 թվականի որոշմամբ որոշվել է թիվ ԵԴ2/6522/02/25 քաղաքացիական գործը քննել գրավոր ընթացակարգով և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օր է նշանակվել 08.08.2025 թվականին՝ հրապարակելով դատական իշխանության պաշտոնական կայքում:

Հայցվորի ներկայացուցչի կողմից 29.07.2025 թվականին ներկայացվել է միջնորդություն՝ հայցի հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին:

Դատարանն, ուսումնասիրելով ներկայացված միջնորդությունը և այն համադրելով ներկայացված հայցադիմումի հետ՝ արձանագրում է հետևյալը՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցվորը հայցի առարկայի և հիմքի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ ներկայացնում է գրավոր միջնորդություն մինչև ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշում կայացնելը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի առարկայի փոփոխությունը հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն այլ պահանջով փոխարինելը, պահանջը փոփոխելը կամ լրացնելն է, այդ թվում՝ պահանջների չափն ավելացնելը կամ նվազեցնելը, որը թույլատրում է առաջին ատյանի դատարանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն օրենսգրքի իմաստով՝ հայցի հիմքի փոփոխությունը հայցվորի կողմից հայցի հիմքում սկզբնապես դրված փաստերն այլ փաստերով փոխարինելն է, ինչպես նաև հայցի հիմքում դրված փաստերի շրջանակը ճշգրտելն է այն լրացնելու կամ պակասեցնելու եղանակով:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանը հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ կայացնում է առանձին դատական ակտի ձևով որոշում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ միջնորդությունը քննարկվել և այն թույլատրելու կամ մերժելու վերաբերյալ որոշումը կայացվել է դատական նիստում՝ գործին մասնակցող անձանց ներկայությամբ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայցի առարկայի կամ հիմքի փոփոխությունը թույլատրելու վերաբերյալ միջնորդությունը դատարանը մերժում է, եթե այն բավարարելու դեպքում փոփոխվում է այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է, կամ քննվող գործը դուրս է գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության

սահմաններից:

Վերոգրյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի 5-րդ մասը հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի թույլատրելիության համար սահմանել է երկու չափանիշի միաժամանակյա առկայություն՝ հայցի հիմքի և առարկայի կամ դրանցից յուրաքանչյուրի փոփոխությունը դատարանն ընդունում է, եթե չի փոփոխվում այն իրավունքը կամ օրենքով պահպանվող շահը, որի պաշտպանության նպատակով հայցը սկզբնապես հարուցվել է և քննվող գործը դուրս չի գալու առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից:

Վերոգրյալը հաշվի առնելով՝ Դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում հայցի հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին միջնորդությունը բավարարելու դեպքում իրավունքի կամ օրենքով պահպանվող շահի փոփոխություն առկա չէ, ինչպես նաև քննվող գործը դուրս չի գա առաջին ատյանի դատարանի ենթակայության սահմաններից, հետևաբար Հայցվորների ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի և առարկայի փոփոխությունը թույլատրելու մասին, ենթակա է բավարարման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.7 հոդվածի համաձայն՝ հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Տվյալ դեպքում Հայցվորի ներկայացուցչի միջնորդությունը՝ հայցի հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին, բավարարման ենթակա լինելու պայմաններում Դատարանը գտնում է, որ պատասխանող «Հայաստանի Հանրապետության տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին պետք է տրամադրվի սույն դատական ակտը ստանալուց հետո **<u>հնգօրյա ժամկետ</u>**՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ, 188-րդ, 199-րդ և 200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Ըստ հայցի «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի ընդդեմ «Հայաստանի Հանրապետության տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 22.05.2025 թվականի թիվ 01/01-634 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, քաղաքացիական գործով Հայցվորի ներկայացուցչի կողմից ներկայացված միջնորդությունը՝ հայցի հիմքի փոփոխությունը թույլատրելու մասին բավարարել.

Թույլատրել հայցի հիմքը **<u>փոփոխել և լրացնել</u>** հետևյալ բովանդակությամբ.

<u>-« Նախ հարկ է նշել, որ հանձնաժողովը չի պահպանել ՀՀ</u>

Կառավարության 526-Ն որոշման հավելվածով սահմանված Կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետով նախատեսված պահանջը՝ 1 աշխատանքային օրով նիստը կասեցնելու մասին, քանի որ հանձնաժողովի թիվ 3 արձանագրությունը կազմվել է 2025 թվականի ապրիլի 4-ին, իսկ որպես կասեցման ավարտի վերջնաժամկետ նշվել է 2025 թվականի ապրիլի 7-ը՝ ժամը 16:00-ն, մինչդեռ ելնելով ՀՀ օրենսդրական կարգավորումներից, աշխատանքային օրը ավարտվելու էր ապրիլի 7-ին, ժամը 24:00-ին՝ այսինքն մեկ աշխատանքային օրվա ժամկետը չի պահպանվել:

Հանձնաժողովը, իր 04.04.2025 թ. թիվ 3 արձանագրությամբ նշել է. «... Հանձնաժողովի նախագահն առաջարկեց կասեցնել նիստը մեկ աշխատանքային օրով և առաջարկել «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ին մինչև կասեցման ավարտը՝ 07.04.2025 թ. ժամը 16:00-ն, շտկել անհամապատասխանությունները և ներկայացնել արտադրողի կողմից պաշտոնապես հաստատված Տեղեկատվական բրոշյուր (Data Sheet), որտեղ պետք է գետեղված լինեն սարքի բոլոր այն բնութագրերը, որոնք մասնակիցը ներկայացրել է, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում շտկել հավելված 1.1-ով ներկայացված մոդելը, եթե «Նիկո-Տեկ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող մոդելը QM-65HY-ը չէ»:

Մեջբերված հատվածից պարզ է դառնում, որ Հանձնաժողովը մատնանշել է 2 անհամապատասխանություններ՝ Տեղեկատվական բրոշյուրի բացակայությունը և անհրաժեշտության դեպքում մոդելի անվանման փոփոխությունը: Մոդելի անվանման փոփոխված տարբերակով (շտկված) հավելված 1.1-ը, ինչպես նաև պահանջվող՝ պաշտոնապես հաստատված Տեղեկատվական բրոշյուրը սահմանված կարգով ներկայացվել է: Այսինքն Ընկերությունը պատշաճ կերպով շտկել է այն անհամապատասխանությունները, որոնք Հանձնաժողովը մատնանշել է իր թիվ 3 արձանագրության մեջ:

Այս հանգամանքը փաստվում է նաև Հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ, որում ասվում է, որ Հանձնաժողովը ուսումնասիրել է Ընկերության կողմից «ներկայացված և շտկված» փաստաթղթերը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Ընկերության կողմից ներկայացված Տեղեկատվական բրոշյուրում գետեղված տեղեկատվությունը չի համապատասխանում հայտի հավելված 1.1-ում ներկայացված տեղեկատվությանը, ապա այս անհամապատասխանությունը հայտնաբերվել է և մատնանշվել է Հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ, այսինքն Ընկերության կողմից Հանձնաժողովի թիվ 3 արձանագրությամբ հայտնաբերված անհամապատասխանությունների շտկումից հետո: Նման պարագայում, Մասնակիցը հնարավորություն չի ունեցել շտկելու նոր

հայտնաբերված անհամապատասխանությունը:

Անդրադառնալով այն հանգամանքին, որ Տեղեկատվական բրոշյուրի մեջ նշված տեղեկատվությունը տարբերվել է Մասնակցի կողմից ներկայացված հավելված 1.1-ում զետեղված տվյալներից, հարկ է նշել, որ Տեղեկատվական բրոշյուրը արտադրող կազմակերպության կողմից տրվող հատուկ ձև և բովանդակություն ունեցող փաստաթուղթ է, որի մեջ փոփոխություններ կարող է կատարել միայն արտադրող ընկերությունը, ուստի ոչ թե բրոշյուրը պետք է համապատասխանի հավելված 1.1-ում նշված տվյալներին, այլ հավելված 1.1-ում նշված տվյալները պետք է համապատասխան լինեն Տեղեկատվական բրոշյուրում նշված տվյալներին:

Ելնելով այն հանգամանքից, որ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները, Հանձնաժողովը Ընկերության վրա դրել է անհամաչափ, ոչ իրավաչափ և նույնիսկ՝ անտրամաբանական պահանջ, պահաջելով նրանից ներկայացնել Հավելված 1.1-ով նշված տեղեկատվությանը հապատասխան բրոշյուր, մինչդեռ պետք է մասնակցից պահանջեր ներկայացնել Տեղեկատվական բրոշյուրը և այդ բրոշյուրի տվյալներին համապատասխանող ձևով շտկված հավելված 1.1-ը:

Բացի այդ, ՀՀ պետական տնտեսագիտական համալսարան ՊՈԱԿ-ի ռեկտորի կողմից՝ «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 22.05.2025թ.-ին կայացված թիվ 01/01-634 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) հիմքում դրվել է Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետը, համաձայն որի՝ «Հրավերով նախատեսվում է նաև, որ՝.... եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Ուսումնասիրելով «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՀՏ-1» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) դրույթները, հարկ ենք համարում փաստել, որ դրանում բացակայում է Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով սահմանված նույնաբովանդակ տեքստը: Ինչպես երևում է Կարգի 32-րդ կետի բովանդակությունից, տվյալ կետը հրավերում 19-րդ ենթակետի տեքստը ներառելու վերաբերյալ իմպերատիվ պահանջ դնում է գնահատող հանձնաժողովի վրա, և մասնակիցը տվյալ կետի խախտման հետ որևէ առնչություն ունենալ չի կարող:

Մեկնաբանելով օրենսդրի կամքը, մենք գալիս ենք այն եզրակացության, որ Կարգի 32-րդ կետը իմպերատիվ պահանջ է դնում գնահատող հանձնաժողովի վրա, որպեսզի վերջինս ներառի նույն կետի 19-րդ ենթակետով սահմանված տեքստը հրավերի տեքստում: Տվյալ պարագայում Հանձնաժողովը վերոնշյալ ենթակետը չի ներառել Հրավերի տեքստում, ինչով պայմանավորված էլ տվյալ ենթակետի դրույթները չեն կարող կիրառվել «ՀՊՏՀ-ԳՀԱՊՁԲ-25/ՀՏ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակիցների, այդ թվում նաև՝ Հայցվորի նկատմամբ, քանի որ տվյալ նորմի կիրառության պարտադիր պահանջ է հրավերում այն ներառելը: Փոխարենը, Հանձնաժողովը Հրավերի տեքստում ներառել է նույն ենթակետի 05.02.2025 թվականի խմբագրությամբ տարբերակը, որի համաձայն՝ «եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:»:

Ինչպես երևում է Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի ներկայումս գործող և վերևում մեջբերված խմբագրությունների համեմատությունից, օրենսդիրը նոր խմբագրությամբ ընդլայնել է «գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում» հասկացությունը, այդ հասկացության մեջ ընդգրկելով նաև հետևյալ բովանդակությամբ հատված՝ «ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները»: Ստացվում է, որ օրենսդիրը ընդլայնել է մասնակիցների կողմից այն ոչ իրավաչափ վարքագծի դրսևորման եղանակների նկարագրությունը, որոնց դեպքում մասնակիցների վրա կարելի է ներազդել և որոշակիորեն

սահմանափակել նրանց՝ տնտեսական գործունեությամբ զբաղվելու իրավունքը, այն է՝ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները:

Վերոնշյալից ենթադրում ենք, որ նշված ենթակետի 05.02.2025 թվականի խմբագրությամբ կիրառումը, չի կարող տարածվել մասնակցի կողմից ոչ ամբողջական շտկում ներկայացնելու դեպքերի վրա, ինչն էլ ենթադրաբար եղել է Հայցվորի պարագայում, ինչն էլ իր հերթին Պատվիրատուի ղեկավարի Որոշումը դարձնում է զուրկ որևէ իրավական հիմքից, քանի որ չկա ստանձնած պարտավորության խախտում, չկա դրա արդյունքում վրա հասնող բացասական հետևանք (վիճարկման առարկա հանդիսացող պատվիրատուի որոշումը):

Ստացվում է, որ տվյալ դեպքում Պատվիրատուի ղեկավարը իր «պատճառաբանված» որոշման մեջ՝

1. չի ներառել այն փաստական հանգամանքները, որոնք ընկած են որոշման հիմքում, սահմանափակվելով միայն՝ «...Մասնակիցը հայտը ներկայացրել էր թերի, հրավերի պահանջներին չհամապատասխանող» ձևակերպմամբ, որը չի բացահայտում, թե Մասնակիցը կոնկրետ ի՞նչ ոչ իրավաչափ վարքագիծ է դրսևորել, որով «...խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»,

2. Մասնակցի կողմից դրսևորված ենթադրաբար ոչ իրավաչափ վարքագծի նկարագրության մեջ (Որոշման 2-րդ և 3-րդ պարբերություններում) հիշատակել է սխալ և տվյալ պարբերության բովանդակության հետ ոչ մի կապ չունեցող կետեր (համապատասխանաբար՝ Կարգի 42-րդ և 43-րդ կետերը),

3. որպես Որոշման իրավական հիմք մատնանշել է Կարգի 32-րդ կետը, որը պարտադիր վարքագծի կանոն է սահմանում Հանձնաժողովի, այլ ոչ թե՝ Մասնակցի համար, բացի այդ վկայակոչել է վերոնշյալ կետի 19-րդ ենթակետը, որը կիրառելի է միայն այն պարագայում, երբ ներառված է հրավերի մեջ, սակայն տվյալ պարագայում Հրավերի տեքստում բացակայում է վերոնշյալ ենթակետի ներկայումս գործող խմբագրությամբ բովանդակությանը համապատասխանող տեքստը: Ինչպես նաև, դրանով իսկ փաստացի ստացվում է, որ բացակայում է մասնակցին թերի կամ ոչ ամբողջական շտկելու համար պատասխանատվության ենթարկելու հիմքը:

Ելնելով վերագրյալից, գալիս ենք այն համոզմանը, որ Որոշման մեջ բացակայում են պատճառաբանված որոշման կայացման համար պարտադիր հատկանիշ համարվող և՛ այն փաստական հանգամանքները, որոնք ընկած են Որոշման հիմքում, և՛ այն իրավական հիմքերը, որոնցով հիմնավորվում են կայացված Որոշման օրինականությունն ու իրավաչափությունը:

Այսինքն՝ Որոշումը կայացվել է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված համաչափության սկզբունքի և ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով սահմանված օրինականության սկզբունքի խախտմամբ, ուստի ենթակա է վերացման (անվավեր ճանաչվելու):»:

2. Պատասխանող «Հայաստանի Հանրապետության տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ին տրամադրել սույն որոշումը ստանալուց հետո **հնգօրյա** ժամկետ՝ փոփոխված հայցադիմումի վերաբերյալ հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **Ս. ԵՐԻՑՅԱՆ**

Digitally signed by YERITSYAN SARGIS 3207830072

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am